

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Маштоу э.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

**ՊԱՏԵՐԱԶՄԻՑ՝ ԿԱՅԱՑՈՒՄ:
ԼՂՀ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Վիոլետտա ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվա հասարակագիտական համալսարան,
ՌՕԼՄՀ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և
Եվրոպագիտության ամբիոն,*

*Քաղաքական գիտությունների / ԻԳ.ՕՕ.ՕԿ. Միջազգային
հարաբերություններ/ ասպիրանտ,*

*ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության
և Եվրոպագիտության ամբիոնի դասախոս
petrosyan.violetta@gmail.com*

Գիտական ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր Տիգրան Թորոսյան

Պետության ստեղծումը և կայացումը յուրաքանչյուր ժողովրդի գլխավոր նպատակներից է՝ որպես իր անվտանգության, բարեկեցության և բնականոն զարգացման ապահովման հիմնական մեխանիզմ: Հատկանշական է, որ 20-րդ դարի երկրորդ կեսին՝ ՄԱԿ-ի կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո, միջազգային իրավունքում տեղի ունեցած լուրջ զարգացումների արդյունքում ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ճանաչվել է միջազգային իրավունքի բարձրագույն, անվերապահ նորմ¹ և արձագանքավել է պետականաստեղծման երկու բուռն շրջան: Առաջինը 60-70-ական թվականների ապագադրությամբ ակիքն էր², երկրորդը՝ 90-ականների սկիզբը, երբ ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի փլուզումներից հետո անկախություն հռչակեցին երկուսուկես տասնյակից ավելի երկրներ: Ընդ որում, դրանց մի մասի անկախությունը ճանաչվեց անմիջապես, մյուսները դեռևս մնում են չճանաչված:

Այդուհանդերձ, թե՛ 20-րդ դարի երկրորդ կեսին, թե՛ մինչ այդ ստեղծված պետությունների փորձը ցույց է տալիս, որ պետության ստեղծումը և անգամ միջազգային ճանաչումն ինքնաբերաբար չի հանգեցնում անվտանգության, բարեկեցության և բնականոն զարգացման ապահովմանը: Այդ խնդիրները հատկապես բարդ են ԽՍՀՄ փլուզման հետևանքով անկախության ձեռք բերած պետությունների համար, որոնք ստիպված են եղել հաղթահարել առանձնահատուկ դժվարություններ և դիմակայել մի շարք բարդ մարտահրավերների³: Ավելին, խիստ բազմազան են պետու-

¹ **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2008:

² United Nations Judicial Yearbook 1980, pp. 182-183.

³ **Թորոսյան Տ.**, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Գիտություն հրատ., Երևան, 2006:

թյունների զարգացման հետագծերն ու առկա իրավիճակներն, ինչն էլ ավելի է դժվարացնում այնպիսի բարդ համակարգերի կատարելագործումն, ինչպիսին պետությունն է, և միանգամայն բնական է պետությունների գործունեության արդյունվետության կամ կայացածության գնահատման մեթոդների, մոդելների ու ցուցանիշների ստեղծմանն ուղղված գիտական հետազոտությունների թվի կտրուկ աճը վերջին տասնամյակների ընթացքում, որոնց նպատակն է ոչ միայն գնահատել իրավիճակն, այլև բացահայտել առկա թերությունների պատճառներն ու օբյեկտիվ հիմք ստեղծել վերոհիշյալ խնդիրների լուծման համար: Սակայն հատկանշական է, որ թեև անցած դարի 60-ական թվականներից ի վեր սկսել են մշակվել պետության կայացածության գնահատման հայեցակարգեր ու մոդելներ, այդուհանդերձ դրանք դեռևս գտնվում են լրամշակման ու կատարելագործման փուլում: Թեև այդ ընթացքում արդեն իսկ իրականացվել են պետությունների կայացածության զգալի թվով էմպիրիկ ուսումնասիրություններ, սակայն պետությունների կայացածության հայեցակարգը դեռևս մնում է ոչ բավարար հստակեցված, քանզի դրա հայեցակարգային և գործառնության ձևակերպումների վրա հետագա աշխատանքի կարիք կա¹: Պետության կայացածության գնահատման ուսումնասիրությունները կենտրոնանում են պետության կայացածության հիմնախնդրի միայն առանձին բաղադրիչների սահմանման վրա, սակայն բացակայում են ընդհանրացնող հայեցակարգային աշխատանքները և համընդգրկուն էմպիրիկ համեմատությունները²: Ի հավելումս, պետության կայացածության գնահատման բոլոր մոդելները (բացառությամբ «վզատության վարկանիշն աշխարհում» գեկույցի³) անդրադառնալով միայն ճանաչված պետություններին, օգտագործում են ենթացուցիչներ, որոնք ամբողջությամբ չեն ներկայացնում և բացահայտում չճանաչված պետությունների կայացածության խնդիրները: Խնդրի լուծման բարդությունը պայմանավորված է մի շարք այլ հանգամանքներով ևս: Այս կամ այն պետության հնարավորությունների և կարողությունների մասին խոսելիս՝ հետազոտողները շատ հաճախ օգտագործում են այնպիսի անորոշ բառեր, ինչպիսիք են «ուժեղ», «թույլ»: Հարկ է նշել, որ պետությունները բնութագրող «ուժեղ» և «թույլ» ձևակերպումների վերաբերյալ տարբեր հեղինակների պատկերացումները մեծապես տարբերվում են միմյանցից՝ սկսած պետական ապարատների արդյունավետ գործունեությունից մինչև պետության զգալի միջամտությունը հասարակության կյանքին, ավտորիտար կառավարումը, զարգացած հանրային սեկտորը և արտաքին ազդեցությունը

¹ **Мелешкина Е.**, Исследования государственной состоятельности: какие уроки мы можем извлечь?, *Политическая наука*, № 2, 2011, с. 9-27.

² **Պետրոսյան Վ.**, Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման դժվարությունները և հեռանկարները: ԼՂՀ դեպքը, Վստարես, Երևան, 2016:

³ Freedom in the World 2016, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016>, (11.07.2016).

և/կամ միջամտությունը չթույլատրելու կարողությունը¹: Ոչ հստակ եզրույթների օգտագործումն Էմպիրիկ հետազոտություններում հանգեցնում է դրանց արդյունքների խեղաթյուրմանը², իսկ երբեմն՝ հետազոտությունների արդյունքների կամայական մեկնաբանությանը՝ քաղաքական նպատակներով: Միևնույն ժամանակ առկա է մեկ այլ առավել բարդ խնդիր. չճանաչված պետությունների կայացածության գնահատման հնարավորությունների ուսումնասիրության ժամանակ արձանագրվեցին մի շարք կարևոր խնդիրներ, որոնք խաթարում են կամ գործնականում անհնար են դարձնում այդ պետությունների կայացածության գնահատումը: Սակայն, ԼՂՀ-ի դեպքում այդ խնդիրները բացակայում են, ինչը թույլ է տալիս միջազգային հանրությանը ներկայացնել ԼՂՀ կայացածության մակարդակը: Այսպիսով, հարկ է դիտարկել արձանագրված խնդիրները և ներկայացնել ԼՂՀ կայացածության գնահատման հնարավորության բացառիկությունն այդ համատեքստում:

Զճանաչված պետությունների կայացածության գնահատման կարևոր խնդիր է տեղեկատվության պակասը կամ որոշ դեպքերում իսպառ բացակայությունը: Յարկ է նշել, որ ցուցիչների մեծ մասի համար օգտագործվում են թե՛ պետական կայքէջերում տեղ գտած պաշտոնական տեղեկատվությունը, վիճակագրական տվյալները և զեկույցները, ինչպես նաև տարբեր գիտական հոդվածներ ու մենագրություններ, թե՛ իրականացնում են սեփական փորձագիտական հետազոտություն, և այդ երկուսի հանրագումարը՝ քանակական տվյալների վերլուծությունը և որակական տվյալների մուտքագրումը, արդյունքում ներկայացնում է տվյալ ցուցիչի պետությունների վերջնական գնահատումը: Սակայն չճանաչված պետությունների պաշտոնական կայքէջերում հաճախ հնարավոր չէ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ մի շարք դեպքերում էլ առհասարակ հնարավոր չէ գտնել պաշտոնական կայքէջերը: Բացառություն են Լեռնային Ղարաբաղի պաշտոնական կայքէջերը, որտեղ ներկայացված է ողջ պաշտոնական տեղեկատվությունը և վիճակագրական տվյալները և զեկույցները:

Միաժամանակ սակավաթիվ և հակասական են չճանաչված պետություններին նվիրված հոդվածները, մենագրությունները, հրապարակումները, մինչդեռ այդ պետությունները նույնպես կարիք ունեն գնահատումների և իրենց ընթացքի վերանայումների: Այդ առումով ԼՂՀ-ն նույնպես բացառիկ է, քանի որ թե՛ ԼՂՀ-ում և ՀՀ-ում բնակվող, թե՛ Սփյուռքի հայ գիտնականները ներկայացնում են ԼՂՀ կայացածության գնահատման համար անհրաժեշտ բոլոր ոլորտների և խնդիրների համընդգրկուն ուսումնասիրություն: Թերևս, նմանատիպ բան կարելի է հանդիպել Կոստվոյի դեպքում, սակայն, բնավ, ոչ Կոստվոյի իշխանությունների կամ հասարակության, այլ այն կազմակերպությունների և պետությունների

¹ Lauridsen L., The Debate on the Developmental State, Development Theory and the Role of the State in Third World Countries, J. Martinussen (ed.), Roskilde univ. centre, Roskilde, 1991, pp. 108–133.

² Сапроги Дж., Искажение концептов в сравнительной политологии, *Полис*, № 3, 2003, с. 67-77.

նախաձեռնությամբ, որոնք «հովանավորում են» այդ պետության ինքնորոշման գործնախագիշտությունը:

Այսպիսով, պետության կայացածության գնահատման գիտական գործիքների լրամշակման ու կատարելագործման խնդիրն արդիական է ոչ միայն ընդհանրապես, այլև հատկապես հայ ժողովրդի և հայկական երկու հանրապետությունների համար: Պետության կայացածությունը հարևանների ոտնձգությունները կանխող կարևոր գործոն է, մինչդեռ թուլությունը մեծացնում է դրանց գայթակղությունն՝ իրենց ձգտումներին ռազմական ճանապարհով հասնելու համար: Դա է ամենամեծ երաշխիքը՝ թույլ չտալու համար ապրիլյան չորսօրյա պատերազմի կրկնություն, որն ընդամենը 4 օրում խլեց հարյուրավոր զինվորների, ինչպես նաև խաղաղ բնակիչների կյանքեր: Այսպիսով, ԼՂՀ կայացածության մակարդակի ուսումնասիրությունը և գնահատումն անվտանգության տեսանկյունից առանցքային նշանակություն ունի, ինչպես նաև կարող է դառնալ հակամարտության կարգավորման իրական գործոն՝ միջազգային հանրությանը ներկայացնելով ԼՂՀ կայացածության մակարդակը որպես անկախ և ինքնիշխան պետության արդյունավետ գործունեության հավաստիք:

Վերոնշյալ խնդիրների լուծումը, անշուշտ, պահանջում է համալիր գործողությունների մի ամբողջ համախումբ: Դրանց լուծման համար առաջին քայլն է «պետության կայացածություն» եզրույթի հստակ սահմանումը, երկրորդը՝ «Խաղաղություն աշխարհին» գնահատման ինտեգրալ ցուցիչի ներկայացումը, որի գլխավոր գնահատողական և վերլուծական գործիքն է ինքնին «պետության կայացածությունը»՝ որպես պետության իր հիմնական գործառնություններն իրականացնելու, ինչպես նաև միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու և իրավասությունների հատկանիշներով օժտված լինելու կարողություն: «Խաղաղություն աշխարհին» ցուցիչը կազմավորելիս ներառվել են պետության կառուցումն ու կայացումը պայմանավորող բոլոր հիմնարար գործառնությունները՝ շեշտը դնելով հենց պետության կայացածության համակողմանի ուսումնասիրության, այլ ոչ ճանաչված և չճանաչված պետությունների տարանջատման և տարբերությունների վերհանման վրա: Այդ համատեքստում պետության կայացածության մակարդակը գործնականորեն հնարավոր չէ ներկայացնել առանձին ոլորտների դիտարկման կամ գնահատման շրջանակներում: Փոխարենը՝ պետության կայացածության գնահատումը հնարավոր է իրականացնել ինտեգրալ գնահատման շրջանակներում, այն է՝ միաժամանակ դիտարկելով պետության գործունեության և պետության կայացածության հաշվարկման համար առանցքային բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգության: Վերջիններիցս յուրաքանչյուրն իր հերթին ներկայացված է ենթացուցիչների համախմբի տեսքով, որոնք համակողմանի ներկայացնում են ոլորտը և պետության կայացածության մակարդակը որոշելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Պետության կայացածության ինտեգրալ գնահատումը թույլ է տալիս միաժամանակ արձանագրել պետության կայացածության բոլոր ոլորտներում և՛ առաջընթացները, և՛ հետընթացները, ինչն էլ թե՛ պետու-

թյուններին, թե՛ միջազգային հանրությանը հնարավորություն է տալիս ուշադրությունը սևեռել ինդրահարույց ոլորտների վրա և օպերատիվ հանձն առնել արձանագրված խնդիրների լուծումը: Նմանատիպ մոտեցումը թույլ կտա պայքարել անվտանգության սպառնալիքների և ապակայունացման դեմ՝ նպաստելով խաղաղության հաստատմանը (այստեղից էլ մոդելի անվանումը):

Ցուցիչը ներկայացնում է գնահատման և արդյունքների մշակման փուլային եռաստիճան համակարգ հետևյալ փուլերով՝

1. **առանձին դեպքի ուսումնասիրություն,**

2. **կլաստերային վերլուծություն՝** ըստ տարածաշրջանների՝ դրանցում ընդգրկված և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների համար, նաև առանձին կլաստերային վերլուծություն միայն չճանաչված պետությունների շրջանակներում, ինչը թույլ կտա ներկայացնել ԼՂՀ կայացածության բարձր մակարդակն ի տարբերություն մյուս չճանաչված պետությունների, ինչպես նաև ԼՂՀ կայացածության մակարդակի համեմատությունը Հարավային Կովկասի և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների հետ,

3. **գլոբալ համեմատություն՝** որպես հեռանկար պլանավորվում է գնահատել աշխարհի բոլոր պետությունների կայացածության մակարդակը և այդ համատեքստում ԼՂՀ կայացածության մակարդակի ներկայացումը: Նմանատիպ համեմատությունն առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ հնարավորություն կտա ևս մեկ անգամ ներկայացնել ԼՂՀ դեպքի բացառիկությունը, որն ունի կայացածության շատ ավելի բարձր մակարդակ, քան մի շարք ճանաչված պետությունները:

Գնահատման և արդյունքների մշակման յուրաքանչյուր փուլի շրջանակներում հրապարակվելու են առանձին պետությունների գնահատման ընթացքը և արձանագրած արդյունքները ներկայացնող մանրամասն զեկույցներ՝ ըստ ենթացուցիչների: II և III փուլերի շրջանակներում պետությունների գրանցած արդյունքների համեմատական վերլուծության թերաթժեքությունից և հնարավոր խեղաթյուրումներից խուսափելու համար համեմատությունը նույնպես կիրականացվի ըստ ենթացուցիչների, այլ ոչ թե պետությունների գնահատման արդյունքում ստացված վերջնական գնահատականների, ինչը, անշուշտ, համեմատաբար ժամանակատար է, սակայն ավելի արդյունավետ: Յուրաքանչյուր տարի ներկայացվելու է նաև տարեկան զարգացման դինամիկան ներկայացնող զեկույց, որը թույլ կտա ըստ ժամանակագրության (տարեկան կտրվածքով) ծանոթանալ յուրաքանչյուր պետության թե՛ առանձին ենթացուցիչների, թե՛ գրանցած ամփոփիչ արդյունքների զարգացման կամ, ընդհակառակը, հետընթացի դինամիկային:

Վիոլետտա Պետրոսյան

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ՝ ԿԱՅԱՑՈՒՄ:

ԼՂՀ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ ԼՂՀ, պետության կայացում, գնահատում, ցուցիչ

ԼՂՀ պետականության 25-ամյա փորձի դիտարկման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի ԼՂՀ կայացածության գնահատումն ու ներկայացումը: Այդ համատեքստում կարևոր հայեցակարգային նշանակություն ունեն գիտական գործիքները, մոդելներն ու ցուցիչներն, որոնք թույլ են տալիս ոչ միայն գնահատել պետության կայացածության մակարդակը, այլև բացահայտել առկա թերություններն ու դրանց պատճառները: Սակայն չճանաչված պետությունների դեպքում առաջանում են գնահատման հավելյալ մարտահրավերներ, որոնք ԼՂՀ-ի դեպքում բացակայում են՝ թույլ տալով միջազգային հանրությանը ներկայացնել ԼՂՀ կայացածության մակարդակը: Նախատեսվում է հետազոտության ընթացքում մշակված «Խաղաղություն աշխարհին» ինտեգրալ գնահատման ցուցիչի միջոցով գնահատել և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների կայացածության մակարդակը:

Виолетта Петросян

ОТ ВОЙНЫ К СОСТОЯТЕЛЬНОСТИ:

ОЦЕНКА, ТРУДНОСТИ И ПЕРСПЕКТИВЫ ГОСУДАРСТВЕННОЙ СОСТОЯТЕЛЬНОСТИ НКР

Ключевые слова: НКР, государственная состоятельность, оценка, индекс

При рассмотрении 25-летнего опыта государственности НКР особо важное значение имеет оценка государственной состоятельности. В данном контексте важную концептуальную роль играют научные инструменты, модели и индексы, которые не только позволяют оценить уровень государственной состоятельности, а также предоставляют возможность выявить существующие недостатки и их причины. Однако, при оценивании непризнанных государств возникают дополнительные проблемы, которые отсутствуют в случае НКР, давая возможность представить международному сообществу уровень государственной состоятельности НКР. Планируется осуществить оценивание как признанных, так и непризнанных стран при помощи разработанного в ходе исследования интегрального индекса «Миру мир».

Violetta Petrosyan

**FROM CONFLICT TO STATENESS:
NKR STATENESS LEVEL ASSESSMENT, CHALLENGES AND
PERSPECTIVES**

Keywords: *NKR, stateness, assessment, index*

Within the studies of 25 years of NKR statehood, the assessment and illustration of NKR stateness level is of exceptional importance. In that context, of conceptual significance are the scientific tools, models and indexes allowing not only to assess stateness level, but also to indentify the existing faults and the reasons behind them. However, while assessing the stateness of non-recognized states, some additional challenges arise, which NKR doesn't face. It is planned to This enables to present to the international community NKR stateness level. It is planned to accomplish the assessment of both recognized and non-recognized states via developed within the research "Peace to the World" Index.